22 NOV 2017

ԽՍՀՄ — ՑԺԿ
ՊԵՏԱՇԽԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ ԳԼԽ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# ՀՈՒՑԱՏԵՏՐ

## ՀԻՄՆԱՐԿ-ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԿԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ 2-ՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ (ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐՎԱ ԲԱԺԻՆ) ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՈՎ ՓՈԽԱՆԱԿՈՒՄՆ ԱՆՑԿԱՑՆՈՂ ԿԵՏԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀԽՍՀ ՊԵՏԱՇԽԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ 1936 Թ.

Տեխն. ձևավոր. յեվ սրբագրեց
ԱՐՇ. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

Սևան-Զանգ-չինի տպարան Ռեկլամ-Հատ.-Բյուրո

Բաղլիտ № 1103 Պատվեր № 28—273 Տիրաժ 3000

# ՀՈՒՑԱՏԵՏՐ

## ՀԻՄՆԱՐԿ-ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԿԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ 2-ՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ (ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐՎԱ ԲԱԺԻՆ) ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՈՎ ՓՈԽԱՆԱԿՈՒՄՆ ԱՆՑԿԱՑՆՈՂ ԿԵՏԵՐԻ ՀԱՄԱՐ

*1) Մինչև փոխանակումն սկսելն ոժանդակող հանձնաժողովը հաշվապահության հետ միասին պարտավոր ե կազմել և ներկայացնել շրջ.(քաղ)դրամարկղին իրենց աշխատանքի պլանը։*

*2) Փոխանակման նախորյակին հրավիրել հիմնարկ-ձեռնարկության կոլլեկտիվի անդամների ընդհանուր ժողով, պարզաբանելով փոխանակման նշանակության կարգի և պայմանների մասին։*

*3) Յելնելով պարտատոմսերի հարմարություններից սահմանել պարտատոմսերի փոխանակման համար անհրաժեշտ քանակությամբ ստուգման և փոխանակման կետեր։*

4) Նախքան փոխանակումը, փոխանակման յենթակա բոլոր պարտատոմսերն, անկախ նրանից թե նրանք ստացվել են պարտատոմսատիրոջ կողմից, անխտիր պետք է պարտատոմսատիրոջ ներկայությամբ լրիվ չափով ստուգման յենթարկվեն վիճակահանության բոլոր աղյուսակներով։

5) Փոխանակման ժամանակ պետք է ձեռքի տակ ունենալ փոխանակման № 155 ձևի ցուցակը և հին պարտատոմսերը փոխանակել նորով, այնպիսի արժեքի պարտատոմսերով, վորոնք հայտնված են յեղել պարտատոմսատերերի կողմից։

Այդ ցուցակները կազմելու ժամանակ, վերցնել այդ ցուցակներում պարտատոմսատիրոջ ստորագրությունը՝ պարտատոմսերը ստանալու մասին։

6) Այն դեպքում, յերբ պարտատոմսատերը փոխանակման է ներկայացնում ավելի կամ պակաս գումարի նախկին փոխառությունների պարտատոմսեր քան նա հայտնել է ցուցակները կազմելու ժամանակ, պարտատոմսերի փոխանակումը պետք է կատարել, անարգել կերպով։

Նույնպես անարգել կերպով փոխանակել այն պարտատոմսերը, վորոնք ժամանակին չեն մտել փոխանակման ձև № 155 ցուցակի մեջ և այն դեպքում, յերբ պարտատոմսատերը ցանկանում է փոփոխության յենթարկել իր սկզբնական հայտը։



7) Յերկրորդ հնգամյակի փոխառության (4-րդ տարվա բաժին) պարտատոմսերը բաց է թողնված 500, 300, 200, 100 և 50 ռուբլու արժողությամբ։ Այդ նույն փոխառության 25 և 10 ռուբլիանոց արժողությամբ պարտատոմսերը պետք է տրվեն միմիայն այն դեպքում, յերբ փոխանակման համար ներկայացված պարտատոմսերի արժեքի համաձայն, հնարավոր չե տալ ավելի բարձր արժեք ունեցող պարտատոմս։

8) Փոխառության պարտատոմսեր ստանալու համար, անպայման պետք է ներկայացնել շրջ(քաղ) խնայդրամարկղեն պահանջագիր-լիազորագիր (ձև № 140), առանց վորի դրամարկղը բաց չի թողնելու առհաշիվ պարտատոմսեր։

9) Յեթե կոլեկտիվը մեծ է և փոխանակումը կատարվելու յե առանձին ցեխերում, այդ դեպքում հաշվապահությունը առհաշիվ բաց է թողնում ցեխում առանձնացված անձին՝ պահանջվող քանակի պարտատոմս։

Այդ աշխատակիցներին տրված պարտատոմսերը, յուրաքանչյուր որ աշխատանքները վերջացնելուց հետո, նրանց կողմից անպայման պիտի հանձնվեն հիմնարկ-ձեռնարկության դրամարկղը փոխանակման համար նախորդ փոխառություններից ընդունված պարտատոմսերի հետ միասին։

10) Փոխանակման յենթակա յեն՝

ա. 3-րդ ինդուստրացման փոխառությունը,

բ. 5-ամյակը չորս տարում փոխառությունը,

գ. 5-ամյակի 3-րդ վճռական տարվա փոխառություն,

դ. 5-ամյակի 4-րդ ավարտական տարվա փոխառություն,

յե. 2-րդ հնգամյակի 1-ին տարվա փոխառություն,

զ. 2-րդ հնգամյակի 2-րդ տարվա փոխառություն,

է. 2-րդ հնգամյակի 3-րդ տարվա փոխառություն,

11) Վերոհիշյալ փոխառությունների պարտատոմսերը հիմնարկ-ձեռնարկություններում փոխանակվում են միայն այն դեպքում, յերբ՝

ա. Ունեն ֆինժողկոմի չփչացված ստորագրությունը։

բ. Չունեն իրենց վրա կեղծման և ուղղումների հետքեր, ինչպես և մարման դրոշմների (շտամպ) կամ առաջներում կատարված վճարումների հետքեր։

գ. Ունեն իրենց վրա փոխառությունների անվանումը և պարտատոմսի արժեքը (անվանական արժեքը), ինչպես և պարտատոմսի չփչացած համարը և սերիան։

դ. Չեն կազմված տարբեր պարտատոմսերի մասերից։

12) Նախորդ փոխառությունների վնասված պարտատոմսերը, վորոնց վրա բացակայում են 12-րդ կետում նշված վճարունակության նշանները, պարտատոմսատիրոջ կողմից պետք է ներկայացվեն շրջ(քաղ) խնայդրամարկղին, վորոնք և կատարելու յեն նման պարտատոմսերի փոխանակությունը։

13) Առանց վորևէ արգելքի պետք է փոխանակել.

ա. Նախորդ փոխառությունների տոկոսաբեր և տոկոսաբեր-շահող մասերի պարտատոմսերը, վորոնց վրա բացակայում են 1937 թ. նոյեմբերի 1-ի և բոլոր հաջորդ ժամկետների կուպոնները։

բ. «Հնգամյակը 4 տարում» փոխառության պարտատոմսերը, վորոնց վրա բացակայում են լրացուցիչ կտրոնները։

գ. Հնգամյակի չորրորդ ավարտական տարվա փոխառության անպայման շահող մասի բոլոր պարտատոմսերը, վորոնց վրա բացակայում են «շահումն ստանալու կտրոնը»։

դ. Հնգամյակի չորրորդ ավարտական տարվա փոխառության անպայման շահող մասի պարտատոմսերը, վորոնցով շահումներ են վճարված այդ փոխառության կատարված վիճակահանություններով (1-15), յենթակա յեն փոխանակման 2-րդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) պարտատոմսերով՝ ընդհանուր հիմունքներով։

14) Յեթե «Հնգամյակի չորրորդ ավարտական տարվա» փոխառության պարտատոմսերը, վորն ունի շահած պարտատոմս, առանց «կտրոնի» հայտաբերի,

վոր ինքը շահումը չի ստացել և պարտատոմսն առանց «կտրոնի» տված է նրան բաժնեգրության վայրում, ապա այդպիսի պարտատոմսի փոխանակումը պիտի կատարվի միայն շրջ(քաղ)դրամարկղում։

15) Այն պարտատոմսատերերը, վորոնց մոտ նախորդ փոխառությունների պարտատոմսերի փոխանակման ժամանակ մնում են մեկ պարտատոմս 5 ռուբլիանոց, կամ 2 ռուբլի 50 կոպեկանոց, կամ 2 պարտատոմսեր 2 ռուբլի 50-ական կոպեկանոց, կամ մեկական պարտատոմսեր՝ 5 ռուբլիանոց և 2 ռուբլի 50 կոպեկանոց կարող են ստանալ՝

ա. Յեթե նրանք այդ կցանկանան, յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) տաս ռուբլիանոց պարտատոմս լրացուցիչ կերպով վճարելով 2 ռուբլի 50 կոպ., 5 ռուբլի կամ 7 ռուբլի 50 կոպ., կամ հանձնել այդ պարտատոմսերը յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) բաժնեգրության հերթական մուծումների հաշվին, այն դեպքում, յերբ փոխանակումը կատարվում է ձեռնարկություններում և հիմնարկություններում։

բ. Յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) տաս ռուբլիանոց պարտատոմս, լրացուցիչ կերպով մուծելով 2 ռուբլի 50 կոպ., 5 ռուբլի կամ 7 ռուբլի 50 կոպեկ, այն դեպքում, յերբ փոխանակումն անմիջա-



կանորեն կատարվում է խնայողական դրամարկղում։

16) Ձեռնարկությունները և հիմնարկները, պարտավոր են նախորդ փոխառությունների մանր արժեքներով պարտատոմսեր ունեցող պարտատոմսատերերի հետ վերոհիշյալ դեպքում հաշվարկումները ձևակերպել հետևյալ կերպ՝

ա) Այն դեպքում, յերբ մանր արժեքով պարտատոմս հանձնող պարտատոմսատերը ցանկանում է վճարել լրացուցիչ 2 ռուբլի 50 կոպեկ, 5 ռուբլի կամ 7 ռուբլի 50 կոպեկ հասցնելով այդպիսին յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) տաս ռուբլիանոց պարտատոմսերի արժեքին, պարտատոմսերի փոխանակումը կատարող աշխատակիցը պարտավոր է ընդունել մանր արժեք—2 ռուբլի 50 կոպեկանոց, 5 ռուբլի կամ 7 ռուբլի 50 կոպեկանոց պարտատոմսը և ստանալ այդ պարտատոմսատիրոջից կանխիկ դրամ—համապատասխան գումարով՝ 7 ռուբլի 50 կոպ., 5 ռուբլի կամ 2 ռուբլի 50 կոպեկ, գրել ցուցակի մեջ ազգանունը և ընդունված պարտատոմսի գումարը, տալ յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) տաս ռուբլիանոց պարտատոմս և վերցնել պարտատոմսատիրոջից ստորագրություն—դրամը վճարելու և տաս ռուբլիանոց պարտատոմսն ստանալու մասին։

Այդ կարգով ստացված դրամը և նախորդ փոխառությունների մանր արժեք պարտատոմսերը ցուցակի հետ միասին, ձեռնարկություններն ու հիմնարկները պարտավոր են հանձնել շրջ(քաղ)խնայդրամարկղին փոխանակման համար ընդունված նախորդ փոխառությունների պարտատոմսերի հերթական հանձնումը կատարելիս:

17) Յեթե մանրարժեք պարտատոմս ունեցողը ցանկանում է հանձնել իր մանրարժեք պարտատոմսերը ի հաշիվ յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) բաժնեգրության հերթական մուծման, ապա պարտատոմսերի փոխանակումը կատարող աշխատակիցը պարտավոր է ընդունել այդ պարտատոմսատիրոջից 2 ռուբլի 50 կոպեկ, 5 ռուբլի կամ 7 ռուբլի 50 կոպեկ մանրարժեք պարտատոմսերը, գրել պարտատոմսատիրոջ ազգանունը և ընդունված պարտատոմսերի գումարն առանձին ցուցակի մեջ և վերցնել ցուցակի վրա պարտատոմսատիրոջ ստորագրությունն իր կողմից մանրարժեք պարտատոմսերի հանձնումը հաստատելու համար:

Ցուցակը, ընդունված մանրարժեք պարտատոմսերի հետ միասին հանձնվում է ձեռնարկության հաշվապահությանը, այդ պարտատոմսերն իրենց անվանական արժեքով վորպես փոխառության բաժնեգրության մուծում հաշվի առնելու համար: Մանրարժեք պարտատոմսերի անվանական արժեքը, վորն ընդունված է համաձայն ցուցակի վորպես փոխառության բաժնեգրության հերթական մուծում, պետք գրանցվի



բաժնեգիրների հերթական մուծումները հաշվի առնելու համար սահմանված փաստաթղթերի մեջ, ընդ վորում ձեռնարկություններում և հիմնարկություններում՝ ձև № 1 բ. «փոխառության բաժնեգրության քարտ»-ի կամ ձև № 137 տեղեկագրի մեջ:

Փոխառության բաժնեգրության հերթական մուծումները խնայդրամարկղը փոխանցելիս, ձեռնարկությունը և հիմնարկությունը պարտավոր են հանձնել խնայդրամարկղին բաժնեգիրներից ստացված մանրարժեք պարտատոմսերը, բաժնեգրերի ցուցակների հետ միասին:

18) Հիմնարկ ձեռնարկության հաշվապահությունը պարտավոր է պարտատոմսերի փոխանակումը վերջանալուց վոչ ուշ քան հինգ որ հետո ներկայացնել շրջ(քաղ)խնայդրամարկղին պարտատոմսերի փոխանակման վերջնական հաշվետվությունը սահմանված ձևով:

19) Բացատրել պարտատոմսատերերին, վոր նախորդ փոխառությունների տոկոսաբեր և տոկոսաբեր շահող մասերի պարտատոմսերի 1936 թվի նոյեմբերի 1-ի և դեկտեմբերի 1-ի կուպոնները վճարվում են խնայդրամարկղների կողմից նոյեմբերի 1-ից սկսած:

Պետական աշխատավորական խնայդրամարկղների յեվ պետվարկի
Հայաստանի վարչություն

18 НОЯ 1956 730

11
26651

# ՎՐԻՊԱԿՆ

| Եջ | Տող | Տպված է | Կարդալ |
|---|---|---|---|
| | ներ-քևից | | |
| 3 | 4 | Պարտատոմսերի | պար·տատոմսատերերի |
| 6 | 2 | 12. | 11 |
| 7 | 2 | պարտատոմսերը | պարտատոմսատերը |

4-րդ էջի 11-րդ տողի վերջակետը վերացնել և կարդալ՝ կողմից, այդ ցուցակները չազմելու ժամանակ վերցնելով

ԳՐԱՊԱԼԱՏ

ՀՀ Ազգային գրադարան
NL0927557